Association of Credit Organization of the Republic of Armenia

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունվար 2022

Բովանդակություն

Բովանդակություն 1

Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր 2

Ֆինանսական դիրք 3

Վարկային պորտֆել և համեմատականներ 4

Տրամադրված վարկերի ծավալը 4

Տրամադրված վարկերի քանակը 4

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 6

Վարկերի կառավարում 7

Վերլուծական գործակիցներ 8

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2022թ.-ի Հունվարի 31-ի դրությամբ կազմել են 157.65 մլրդ դրամ՝ 2021թ.-ի Հունվարի նկատմամբ նվազելով 5.7%-ով, իսկ 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ՝ 0.5%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2022թ.-ի Հունվարի 31-ի դրությամբ կազմել է 110.61 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Հունվարի նկատմամբ նվազելով 11.7%-ով, իսկ 2021թ. Դեկտեմբերի նկատմամբ՝ 1.5%-ով (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2022թ.-ի Հունվարի վերջի դրությամբ կազմել է 51.51 մլրդ դրամ՝ 2021թ.-ի Հունվարի նկատմամբ նվազելով 11.2%-ով, իսկ 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ աճելով 0.5%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2021-2022թթ. Հունվարի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2022թ.-ի Հունվար ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 4. 4 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 49.6%-ով, իսկ 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ նվազել է 61.2%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2021 և 2022 թթ.-երի Հունվար ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2022թ.-ի Հունվար ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 22,679 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 11.0%-ով, իսկ 2021թ.-ի Հունվարի նկատմամբ աճել է 199.8%-ով (Գծ. 3):
- 2022թ.-ի Հունվար ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 115,377 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2021թ.-ի Հունվարի նկատմամբ նվազել է 7.9%-ով, իսկ 2021թ. -ի Դեկտեմբերի նկատմամբ աճել է 1.4 %-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2022թ.-ի Հունվարին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 194 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 959 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2021թ.-ի Հունվարին կազմել են համապատասխանաբար՝389 և 999- հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2021 և 2022 թթ.-երի Հունվար ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2022թ.-ի Հունվարի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 151 մասնաճյուղ, որը, համեմատած 2021թ.-ի Հունվարի հետ, նվազել է 2-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2022թ.-ի Հունվարի դրությամբ ունեցել են 521 վարկային մասնագետ, որը, համեմատած 2021թ.-ի Հունվարի հետ, նվազել է 14-ով:
- 2022թ.-ի Հունվարին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 8.45 մլն դրամ, նախորդ ամսին՝ 21.84 մլն դրամ, իսկ 2021թ.-ի Հունվարին այս ցուցանիշը կազմել է ևս 5.50 մլն դրամ (Գծ. 5):
- 2022թ.-ի Հունվարի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 212.30 մլն դրամ, նախորդ ամսվա 216.43 մլն դրամի և 2021թ.-ի Հունվարին 234.06 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2022թ.-ի Հունվարի վերջի դրությամբ կազմել է 1,247 մլն դրամ, նախորդ ամիս՝ 811 մլն դրամ և 2021թ.-ի Հունվարին՝ 4,099 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 69.6%-ով, իսկ 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ աճել է 53.7%-ով: 2022թ.-ի Հունվարի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.13%-ը, 2021թ.-ի Հունվարին ևս կազմել է 3. 27% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2022թ.-ի Հունվարի վերջի դրությամբ կազմել է 2,553 մլն դրամ, նախորդ ամիս՝ 2,819 մլն դրամ և 2021 թ.-ի Հունվարին՝ 10,025 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 74. 5%-ով, իսկ 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ՝ 9.4%: 2022թ.-ի Հունվարի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.31-ը, 2021թ.-ի Հունվարին՝ 8.01% (Գծ. 6):
- **Զուտ դուրսգրումներ:** 2022թ.-ի Հունվարի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 1,02 մլն դրամ, նախորդ ամիս՝ 14,335 մլն դրամ և 2021թ.-ի Հունվարին՝238 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2022թ.-ի Հունվարին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 92.9%-ով, իսկ 2021թ.-ի Հունվարի նկատմամբ աճել է 328.1%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Հունվարի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.92%-ը, նախորդ ամսվա 12.76%-ի և 2021թ.-ի Հունվարի 0.19%-ի համեմատ (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Հունվարի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2022թ.-ի Հունվարի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 70.2%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Հունվարին կազմել է 74.9% (Գծ. 7):
- Սույն թվականի Հունվարի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 46.6%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 47%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Հունվարին կազմել է 46.3% (Գծ. 7):
- 2022թ.-ի Հունվարի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 32.7%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Հունվարին կազմել է 34.7% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության

մակարդակը: 20221թ.-ի Հունվար ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 2.06, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 2.0 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Հունվարի համար կազմել է 1.88:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ




Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
28 000,0
26 000,0
24 000,0
22 000,0
20 000,0
18 000,0
16 000,0
14 000,0
12 000,0
10 000,0
8 000,0
6 000,0
4 000,0
2 000,0
-
7 565
11 050
11 663
10 548
10 039
10 500
13 065
11 825
16 505
20 374
21 277
25 496
22 679
Jan-21
Feb-21
Mar-21
Apr-21
May-21
Jun-21
Jul-21
Aug-21
Sep-21
Oct-21
Nov-21
Dec-21
Jan-22


Ժամկետանց վարկերի դինամիկան 01/2021-01/2022
PAR 1-30 days
PAR more than 30 days
12 000 000
11 000 000
10 000 000
9 000 000
8 000 000
7 000 000
6 000 000
5 000 000
4 000 000
3 000 000
2 000 000
1 000 000
-
Jan-21
Feb-21
Mar-21
Apr-21
May-21
Jun-21
Jul-21
Aug-21
Sep-21
Oct-21
Nov-21
Dec-21
Jan-22